

ՄԻ ՊԱՆԴՈՒԽՏ ՀԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԴԱՄԲԱՐԱՆ ԲԱՎԱՐԻԱՅՈՒՄ

Ներքին Բավարիայի գեղատեսիլ քաղաքներից մեկն է Պասսաուն (Passau), ավստրիական սահմանին կից: Երեք գետեր՝ Դանուբը, Ինն ու Իլցը, այնտեղ միանում են միմյանց: Ամեն կողմ՝ կանաչազարդ բլուրներ և հովիտներ: Ամեն քայլափոխի՝ եկեղեցիներ և միջնադարյան պալատներ:

Դանուբ և Ինն գետերի միացման վայրում գտնվող հողաշերտի վրա կառուցված է Նիդերնբուրգ (Ժ դար) վանքը, որի շենքերի համալիրի մեջ է մտնում Ս. Խաչ տաճարը:

Հնուց եկող մի ավանդության համաձայն, վերոհիշյալ տաճարում իր վերջին հանգիստը են գտել վանքում ապաստան գտած մի սրբակենցաղ հայ արքեպիսկոպոս: Նրա թաղման օրը, միջօրեին, արևի զորավոր խավարում է տեղի ունեցել:

Այս ավանդությունը հաստատող միակ արձանագրությունը Վինդենբերգ վանքում է պահպանված, որը սակայն այնքան էլ վստահելի չէր թվում, քանի որ Ս. Խաչ տաճարում մի հայ արքեպիսկոպոսի դամբարան անծանոթ էր:

1978 թվականի փետրվարին, սակայն, երբ վերանորոգվում էր հիշյալ տաճարը, հատակի վրա բացված մի ճեղք առիթ է տալիս հնագետներին ավելի խորը պեղելու, և, ի զարմանս բոլորի, հայտնաբերվում է 23 սեպտեմբեր 1093 թվականին մահացած Գրիգորիոս անունով հայոց արքեպիսկոպոսի դամբարանը: Պեղման աշխատանքները ավարտվում են 1980 թվականին:

Գրիգորիոս արքեպիսկոպոսը թաղված է եղել իր հոգևորականի տարազով, գլուխը դեպի արևելք: Կրծքին՝ մի բրոնզե խաչ, Քրիստոսի կերպարով: Դամբարանում գտնվել է նաև գոտու ճարմանդ ու երկու կապարե տախտակներ, որոնց վրա լատիներենով արձանագրված է ննջեցյալի կենսագրությունը:

Չնայած որ արձանագրությունը խիստ աղավաղված է, սակայն կարելի է ընթերցել այն, թե ննջեցյալը հայոց ազգից է, թե շատ տառապանք է կրել և իր հայրենակիցների հետ ապաստան է գտել Պասսաու քաղաքում:

Դագաղը փայտից է և քարապատ դամբարանի մեջ դրված:

Հնագետները աստղագետների հետ հաստատեցին, թե իսկապես 23 սեպտեմբեր 1093 թվականին, ժամը մոտավորապես 11-ին, արևի զորավոր խավարում է տեղի ունեցել Բավարիայում:

Մյունխենի մարդաբանական ինստիտուտը, քննելով հայ արքեպիսկոպոսի ոսկորները, հաստատեց, թե նա եղել է բարձրահասակ, խիստ զորավոր կազմվածքով: Նա վախճանվել է երիտասարդ՝ 40 տարեկան հասակում:

Շատ հավանաբար Գրիգորիոս արքեպիսկոպոսը 1071 թվականին, Հայաստանում մոլեգնող սելջուկյան արշավանքներից և հալածանքներից փախչելով, ապաստան է գտել իր հայրենակիցների հետ Պասսաու քաղաքում: Թե ի՞նչ է եղել հայ գաղութի պատմությունը հետագա շրջաններում՝ ոչինչ հնարավոր չէ ասել՝ փաստերի չգոյության հետևանքով:

ՀԱԿՈԲ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԼԼԸՆՃՅԱՆ
Հոգևոր հովիվ հայոց Բավարիայի